1. Բաժանորդը, միանալով Անլիմ ժամկետային սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդ և.
   - Ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար,
   - Ստանում է PSG1282N Wi-Fi սարքի (այսուհետ՝ Սարք) անվճար օգտագործման իրավունք (բաժանորդը կարող է հրաժարվել Սարքի անվճար օգտագործման իրավունքից):
2. Սարքի անվճար օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև Անլիմ ժամկետային սակագնային փաթեթից օգտվելու պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև շարունակվում են Ծառայությունների մատուցման հարաբերությունները, և Սարքն անհրաժեշտ է Բաժանորդի կողմից Ծառայությունները ստանալու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Ծառայությունների մատուցման հարաբերությունների դադարեցման դեպքում Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
3. Ինտերնետի այլ սակագնային փաթեթների (բացառությամբ Անլիմ ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդների) բաժանորդները նույնպես կարող են անցում կատարել Անլիմ ժամկետային սակագնային փաթեթին և Ծառայություններից օգտվել սույն պայմաններով:
4. Եթե Բաժանորդը ցանկանում է դադարեցնել Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդագրությունը կհամարվի դադարեցված ընթացիկ պարտքը և այն գումարը, որը Բաժանորդին զիջվել է Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի պայմանների շրջանակներում /կետ 1/ ամբողջությամբ վճարելու և Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդագրության դադարեցման մասին դիմում ներկայացնելու պահից:
5. Եթե Անլիմ ժամկետային սակագնային փաթեթին միանալիս Բաժանորդն իր ցանկությամբ չի օգտվում Սարքի անվճար օգտագործման իրավունքից, ապա Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:
6. Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդները փաթեթի ակտիվացման պահից սկսած առաջին 4 օրացուցային ամիսների ընթացքում հնարավորություն ունեն փոխել սակագնային փաթեթը՝ անցում կատարելով միայն ավելի մեծ արժեքով Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի:

   Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի ակտիվացման պահից սկսած 4-րդ օրացուցային ամսվա ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխել սակագնային փաթեթը՝ անցում կատարելով թե՛ ավելի մեծ, թե՛ ավելի փոքր արժեքով Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի:
7. Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր Անլիմ ժամկետային սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ:

8. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Անլիմ ժամկետային սակագնային փաթեթի պարտադիր գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածի տևողությամբ:

   Անլիմ ժամկետային սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդը օգտվել է Անլիմ ժամկետային սակագնային փաթեթից բաժանորդագրության օրվանից սկսած տասներկու օրացուցային ամիս:

9. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

10. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: